

նաեւ Թագւոր փաշայ Յակոբեան, որոյ ազնուական Տի-
կինն՝ Երանուհի Յակոբեան փաշայ, ի մէջ բազում բա-
րեգործութեանց, տուաւ նաեւ ի կենդանութեան Կ. Պո-
լիսի Ս. Փրկչեան Հիւանդանոցին 12000 ոսկի օսման-
եան: Կա՛ր նաեւ յեգիպտոս Յակոբ Աշըգեան՝ գաւառացի
հարուստ մըն ալ, որ կատակած է Երուսաղէմի Ս. Յա-
կոբեանց վանքին բաւական գումար մը: Վերջերս շա-
հեցան եգիպտական վաճառականութեան մէջ նաեւ Հայկ
Էքիզլէր Զմիւռնացին, Միհրան Գալֆայեան, Կ. Պոլսե-
ցի Կամարական եղբարք և ուրիշ տասնեակ մը վաճա-
ռականներ ու կալուածատէրներ՝ աւելի կանոնաւոր եւ
փորձ գործունէութիւններով, այլ հետու 1850-80ի ե-
գիպտական ոսկեղարին բարեբաղդութիւններէն:

Այսպէս՝ եգիպտացի այրեցեալ ընիկներու և սու-
րիացի, իտալացի, յոյն-կղզեցի ու անգղիացի դրամա-
տէրներու և վաճառականներու մէջ՝ Հայերն ալ մինչեւ
ցայսօր կըրցած են ձեռք բերել առեւտրական վառ յա-
ջողութիւններ այդ վառ կլիմային մէջ: Իսկ փիւնիկ
քանան, արար ու երբայիկ տոհմերու տուն և որրան ե-
ղող Սուրիայի և Պաղեստինի մէջ՝ ի Պէրութ, ի Դա-
մասկոս, ի Յոպպէ և յԵրուսաղէմ՝ չենք լսած առեւտր-
նշանաւոր անձ մը բաց ի Կիւլպէնկեանց մէկ ճիւղէն,
քանի մը հիւլպատոսական անձերէ, առ առաւելն Մազ-
սուտեան Դեւոնդ ելումտապետ վարդապետէ մը և քանի
մը երկրորդական վաճառականներէ:

Ի Կիլիկիա՝ Ատանա, Մարաշ, Մերսին, Տարսոն՝
բամպակի, արմտիքի, մանիֆաթուրայի գործերու մէջ
կարեւոր տեղ մը բռնած են նաեւ Հայք, որոնք չենք
կըրնար յիշել յանուանէ վաւերաբար: Եւ հո՛ս ալ ստէպ՝
յառաջագործութիւնը Կեսարացւոց ձեռքը դիտուած է:
Ատանայի հողն առ հասարակ բերրի է, ունի բազմազան